ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09.10.2024թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 09-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Գ.Պապոյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ն. Հովակիմյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Տ.Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ–ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ
Ժ.Խառատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համակարգման և մեթոդաբանության վարչության պետ
Ա. Կոտոյան	– Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էին՝

Է. Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

2. Բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում:
Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոյան

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը:
Զեկուցող՝ Ա.Սարգսյան

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:
Զեկուցող՝ Ա.Սարգսյան

5. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:
Զեկուցող՝ Ա.Սարգսյան

6. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներ՝ ՀԱՊՀ մինչբուհական

կրթության գծով պրոռեկտոր Էլբակ Էլբակյանի, «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Կարեն Չիլինգարյանի և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար Տիգրան Քեյանի, ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Կարեն Սահակյանի անդամությունը երկարաձգելուն:

Զեկուցող՝ Ա.Կոտոյան

7. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:

Զեկուցող՝ Ա.Կոտոյան

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 09-ի հինգերորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Խորհրդի նախագահը առաջարկեց օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերի քննարկումն իրականացնել համատեղ, քանի որ հարցերը կապված են Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների կատարողականի գնահատումը հաստատելուն:

Օրակարգի առաջին հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում: Հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին: Տեսչական մարմնի 2024 թվականի հունիսի 13-ի հերթական նիստում հանձնարարվել էր ուսումնասիրել միջազգային փորձը՝ գտնելու այն մեթոդները, օրենսդրական փոփոխությունները, որոնք հնարավորություն կտան կատարել վերլուծություններ ու առաջարկներ նիստի օրակարգում քննարկված թեր և գեր լիցքավորմամբ շահագործվող ստուգաչափված չափման միջոցների խնդրի վերաբերյալ, մասնավորապես՝ բենզինի, դիզվառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վառելիքաբաշխիչ աշտարակների ցուցմունքների անհամապատասխանությունը փաստացի լիցքավորված քանակին:

Արմեն Կոտոյանը հայտնեց, որ վերոնշյալ հարցի շրջանակներում Տեսչական մարմնի կողմից իրականացվել են մի շարք գործողություններ՝ ներգրավելով գործընթացին նաև միջազգային գործընկերներին: Տեղի է ունեցել հանդիպում-քննարկում ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)-ի ներկայացուցիչների՝ այդ թվում ծրագրի ղեկավար պարոն Ցոնգ Վու-ի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել ու

քննարկվել է նշված խնդիրը: Կարևորելով այն՝ գործընկերները առաջարկեցին, մինչև 2024 թվականի ավարտը, կազմակերպել ուսումնական այց՝ փորձի փոխանակման նպատակով, ինչպես նաև, հետագայում նախատեսվում է հրավիրել տվյալ ոլորտի փորձագետի՝ խնդրին տեղում խորապես ծանոթանալու ու առաջարկներ ներկայացնելու համար: Արդյունավետ հանդիպում-քննարկում ենք ունեցել նաև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ/CEPA) իրականացման գծով ՀՀ կառավարության Եվրոմիության բարձրաստիճան խորհրդական Խոսե Իգնասիո Պրադաս-Պովեդայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր ու հետագա համագործակցության շրջանակները: Նշված խնդրի վերաբերյալ խորհրդականի կողմից բերվեց ԱՄՆ-ի օրինակը՝ համաձայն որի, ստուգումները իրականացվում են ավտոմեքենաներում հատուկ տեղադրված սենսորային սարքի միջոցով: Այն հնարավորություն է տալիս իրականացնել հսկիչ գնում ու տեղում արձանագրել՝ արդյո՞ք սարքավորումը աշխատում է համաձայն սահմանված չափագիտական կանոնների և նորմերի, թե՞ ոչ: Նշվեց, որ տվյալ սարքավորման արժեքը կազմում է շուրջ 800.000 ԱՄՆ դոլար: Հետագայում փորձագետի հրավերը ևս քննարկվեց: Հանդիպում ենք ունեցել «Եղիցի Լույս» ՍՊԸ-ի հետ: Վերջինիս հետ քննարկվել են հսկիչ գնում իրականացնելու նպատակով սարքերի ձեռքբերման հնարավորությունները, որոնք կտեղադրվեն ավտոմեքենաների մեջ: Այն հնարավորություն կտա օրվա ցանկացած պահի իրականացնել վերահսկողություն, որի իրագործման համար կպահանջվեն նաև օրենսդրական փոփոխություններ: Այժմ, սպասում ենք կազմակերպության կողմից առաջարկների: Հարցը զեկուցելուց հետո թեր և գեր լիցքավորմամբ շահագործվող ստուգաչափված չափման միջոցների խնդրին առընչվող ներկաների միջև կայացավ քննարկում, ինչից հետո Գևորգ Պապոյանը առաջարկեց հարցը ամփոփել և հետագայում քննարկումները շարունակել Ազգային ժողովում:

Օրակարգի երկրորդ հարց՝ բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում:

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին: Հարցը վերաբերում է բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելուն: Արմեն Կոտոյանը հայտնեց, որ Տեսչական մարմնի փորձարկման լաբորատորիան հավատարմագրվել է 2023 թվականի հունիսի ութին, հավատարմագրման ոլորտում ներառված են հետևյալ ցուցանիշները՝ ավտոմոբիլային բենզինի ծծումբի պարունակության որոշում, դիզելային վառելիքի ծծումբի պարունակության որոշում, բռնկման ջերմաստիճան և ֆրակցիոն կազմի որոշում, ինչպես

նաև ոսկու հարգորոշում: Այս մասերով Տեսչական մարմինն ունի հավատարմագրված լաբորատորիա, իսկ օկտանային թվի ցուցանիշը որոշելու համար՝ պարզվում է առկա սարքի հավատարմագրումը հնարավոր չէ ԳՕՍՏ-ի անհամապատասխանության պատճառով: Արդյունքում, Տեսչական մարմնի կողմից վերցված բենզինը տվյալ սարքի միջոցով լաբորատոր փորձաքննության ենթարկելուց որոշվում է ինչպես ծծումբը, այնպես էլ օկտանային թիվը, սակայն այդ մասով սարքը հավատարմագրված չլինելու պատճառով օկտանային թվի ցուցանիշը որոշելու համար նմուշը ուղարկվում է ՍՉԱՄ և արդյունքների մասին տեղեկացվում է Տեսչական մարմին, որ հնարավոր լինի ամփոփել փորձաքննության արդյունքները: Խնդրի լուծումներն են՝ կամ սարքը այդ մասով հավատարմագրելը, կամ ունենալ պայմանավորվածություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, որ հավատարմագրման և Տեսչական մարմնի կողմից ուղարկված փորձանմուշների գումարները հնարավորինս շատ ստուգումներ իրականացնելու նպատակով չվճարել:

Քննարկման ընթացքում Գևորգ Պապոյանը հայտնեց, որ օկտանային թվի ցուցանիշը որոշելու մասով սարքը պետք է հավատարմագրել, իսկ Նարեկ Հովակիմյանը հայտնեց, որ հարցը ավելի հանգամանորեն կուսումնասիրվի և կգտնվի ընդունելի տարբերակը:

Օրակարգի երրորդ հարց և չորրորդ հարց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը և հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Օրակարգի երրորդ և չորրորդ հարցերի զեկուցման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանին:

Զեկուցողը հայտնեց, որ կատարողականների գնահատումը իրականացվել է ամբողջ ծավալով և ներկայացվել են բոլոր անհրաժեշտ տվյալները: Գնահատումը իրականացվել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարողականի գնահատման չափորոշիչների արդյունքների համեմատման միջոցով: Եռամսյակային կատարողականների գնահատումները հանդիսանում են միջանկյալ փաստաթուղթ և ներառվելու են ամփոփիչ տարեկան կատարողականում:

Որակի ապահովման վարչության կողմից 1-ին և 2-րդ կիսամյակներում իրականացված հսկողական գործողությունները ներառել են Տեսչական մարմնի բոլոր ստորաբաժանումների կողմից իրականացված գործառույթների կատարումը ինչպես նաև

Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրի շրջանակում նախատեսված աշխատանքների արդյունքների ուսումնասիրությունը: Տեսչական մարմինը գործունեության տարեկան ծրագրով նախատեսված իր միջոցառումների գերակշիռ մասը ներառյալ կանխարգելիչ և իրազեկման աշխատանքները որպես կատարման ժամկետ նշել է տարվա ընթացքը ինչի հետևանքով դրանց կատարման վերլուծությունը կներկայացվի որակի ապահովման տարեկան հաշվետվությունում:

Զեկուցողը նշեց, որ առավել ուշադրությամբ ուսումնասիրվել են տեսչական մարմնի կողմից պատրաստված փաստաթղթերի համապատասխանումը օրենքների պահանջներին, ինչպես նաև ստացված հարցումների և հրահանգների կատարման ժամկետների պահպանմանը, ինչպես նաև ուսումնասիրվել և վերլուծվել են Տեսչական մարմնի դեմ դատարան ներկայացված բոլոր հայցադիմումները, դատական գործերը և դատարանի որոշումները: Հայտնաբերված խնդիրները քննարկվել են Տեսչական մարմնի ղեկավարության հետ:

Որոշվեց միաձայն՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը և հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Օրակարգի հինգերորդ հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանը: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

Օրակարգի վեցերորդ հարց՝ Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներ՝ ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր Էլբակ Էլբակյանի, «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Կարեն Չիլինգարյանի և «ՓՄՁ

համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար Տիգրան Քեյանի, ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Կարեն Սահակյանի անդամությունը երկարաձգելուն:

Հարցի ներկայացման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին:

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներ՝ ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր Էլբակ Էլբակյանի, «Սպառողների խորհրդատվության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Կարեն Չիլինգարյանի և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար Տիգրան Քեյանի, ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Կարեն Սահակյանի անդամությունը երկարաձգելուն:

Օրակարգի յոթերորդ հարց՝ համաձայնեցնել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը:

Տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստի անցկացման օրը որոշվեց աշխատանքային կարգով համաձայնեցնել Խորհրդի անդամների հետ /2024թ. նոյեմբերի կեսերին/:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն